# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

**09.06.2026թ. ԿՆՔՎԱԾ «ՀՀ ՀԿԿ-ԳՀԱՊՁԲ-Վ-26/30-1»**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** **« 16 » 06. 2026թ.**

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Կարեն Մարգարյանի, որը գործում է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ռ.Գրիգորյանի, որը գործում է «ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲ Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ կողմեր, հիմք ընդունելով կողմերի միջև 09.06.2026թվականին կնքված **N «ՀՀ ՀԿԿ-ԳՀԱՊՁԲ-Վ-26/30-1»** պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերի դրույթները, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1.Համաձայնագրի առարկան, գինը, վճարման կարգը և գործողության ժամկետը

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կարիքների համար **N «ՀՀ ՀԿԿ-ԳՀԱՊՁԲ-Վ-26/30-1»** ծածկագրով 09.06.2026 թվականին **վերելակի** ձեռք բերման նպատակով կնքված Պայմանագրի շրջանակներում նախատեսվել են համապատասխան ֆինանսական միջոցներ ***10 500 000 (տաս միլիոն հինգ հարյուր հազար)*** ՀՀ դրամ գումարի չափով:

**Կողմերը որոշեցին.**

1.1 Հաստատել Պայմանագրի՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ (այսուհետ՝ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*)՝ համաձայն Համաձայնագրի Հավելված N 1-ի:

1.2 Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ապրանքի մատակարարման ժամանակացույցը թողնել անփոփոխ:

1.3 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայությունների մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե** | **«ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲԸ** |
| **ք.Երևան Վ.Վաղարշյան 13ա** | **Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Շահումյան 20** |
| **Ֆ/Ն գործառնական վարչություն** | **ՀՎՀՀ 08908014** |
| **ՀՎՀՀ 00243582** | **«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ** |
| **Հ/Հ 900011040947** | **Հ/Հ 1150016580340333** |
| **Գլխավոր քարտուղար** | **Տնօրեն՝ Ռ. Գրիգորյան** |
| **Կ. Մարգարյան** | |
| (ստորագրություն) Կ.Տ. | (ստորագրություն) Կ.Տ. |

*Հավելված N 1*
*09.06. 2026թ.կնքված*
***«ՀՀ ՀԿԿ-ԳՀԱՊՁԲ-Վ-26/30-1»** ծածկագրով գնման պայմանագրի*
*16.06.2026թ. կնքված N1 Համաձայնագրի*

**Վճարման ժամանակացույց**

| Ապրանքների մատակարարման | | | | | | | | | | | | | | | ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 42414700/501 | Վերելակներ | - | - | - | - | - | 10 500 000 | 10 500 000 | 10 500 000 | 10 500 000 | 10 500 000 | 10 500 000 | 10 500 000 | **10 500 000** |

***Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով.***

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե**
**ք.Երևան Վ.Վաղարշյան 13ա**
**Ֆ/Ն գործառնական վարչություն**
**ՀՎՀՀ 00243582**
**Հ/Հ 900011040947**
**Գլխավոր քարտուղար՝**
**Կ. Մարգարյան**

(ստորագրություն) Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
**«ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲԸ**
**Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր,**
**Շահումյան 20**
**ՀՎՀՀ 08908014**
**«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ**
**Հ/Հ 1150016580340333**
**Տնօրեն՝ Ռ. Գրիգորյան**

(ստորագրություն) Կ.Տ.